ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Թագուհի Արմենի Բաբսեղյանի «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով Ը.00.02 - ««Տնտեսության, դրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրների բացահայտմանն և այդ հիմնախնդիրներին հեռանկարային ու արդյունավետ լուծումների առաջադրմանը:

Էներգետիկան ՀՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից է, որի զարգացմամբ է պայմանավորված ինչպես տնտեսության, այնպես էլ բնակչության կողմից էլեկտրաէներգիայի պահանջարկի բավարարումը: ՀՀ էներգետիկայի բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված է երկրի էներգետիկ անկախության ու էներգահամակարգի անվտանգության ապահովմանը, որի հիմնական խնդիրներն են էներգահամակարգի աշխատանքի անվտանգության և հուսալիության պահպանումը, ֆինանսատնտեսական գործունեության բարելավումը, մասնավորեցմանը հաջորդած փուլում արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի իրականացումը, ինչպես նաև էներգետիկայում իրականացվող բարեփոխումների շարունակությունը և արտաքին հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը:

ՀՀ տնտեսության ճյուղերի կայուն տնտեսական և համաչափ զարգացման համատեքստում էներգետիկան՝ որպես հասարակության զարգացմանն ուղղված կարևորագույն ոլորտ, կոչված է ապահովելու երկրի առաջընթացն ու տնտեսության զարգացումը: Պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է հանդիսանում

էներգետիկայի բնագավառի կարգավորումը, որը նպատակաուղղված է կարգավորող սակագների և թույլտվության պայմանների սահմանմանը և վերահսկմանը, ինչպես նաև մրցակցային շուկայի ձևավորմանն և ՀՀ կայուն տնտեսական զարգացման համար հիմնարար նախադրյալների ստեղծմանը:

Էներգետիկ համակարգում առկա են նկատելի մարտահրավերներ նաև կապված բավարար էներգամատակարարման ապահովման և սպառողների համար մատչելի ու կայուն սակագնային քաղաքականության վարման հետ:

Ուստի, ժամանակի հրամայականն է դարձել ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ներկա վիճակի մի շարք հիմնախնդիրների բացահայտման և դրա արդյունքում արդյունավետ լուծումների առաջադրման միջոցով հասնելու ոլորտի կայուն զարգացմանը, ինչն էլ հանդիսացել է հետազոտության թեմայի ուսումնասիրության շրջանակը:

Վերը նշվածի առումով Թագուհի Արմենի Բարսեղյանի ատենախոսության թեմայի՝«Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» ընտրությունը արդիական է:

Ատենախոսության նպատակը և խնդիրները.

Ատենախոսության հետազոտության նպատակը՝ Էլեկտրաէներգետիկական շուկայի ուսումնասիրության և առկա հիմնախնդիրների բացահայտման համատեքստում, դրանց կարգավորման կատարելագործման, էլեկտրաէներգետիկ ընկերությունների սակագնային քաղաքականության վերաբերյալ կոնկրետ առաջարկությունների և մոտեցումների մշակումն է:

Առաջադրված նպատակի իրականացման համար լուծվել են հետևյալ խնդիրները.

- Տրվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական և տնտեսագիտական վիճակի իրական նկարագիրը,

- հատկորոշվել է կարգավորման գործող կարգի կատարելագործման հնարավորությունների շրջանակը՝ հիմք ընդունելով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի առկա հիմնախնդիրները և առաջարկել հեռանկարային զարգացման լուծումներ,
- էլեկտրաէներգետիկ ընկերությունների սակագնային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից քննարկվել է համակարգի սակագնի կայունացման, հետագա իրականացման հնարավորությունները և ներկայացվել առաջարկություններ սակագնային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ,
- բացահայտվել է համակարգում կորուստները նվազագույնի հասցնելու հնարավորությունները,
- մշակվել է էլեկտրաէներգիայի սակագնի որոշման մեթոդաբանության նոր մոտեցումներ՝ հիմնված ծախսերի օպտիմալացման, կորուստների նվազեցման և օպտիմալ շահութաբերության մակարդակի սահմանման վրա,
- գնահատվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի արտադրության, սակագնային մարժայի, էլեկտրաէներգիայի գնման սակագնի և պահանջարկի փոխազդեցությունները, որոնք պայմանավորում են էներգետիկ համակարգի կարգավորման մեխանիզմները,
- գնահատվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգետիկ ընկերությունների օպտիմալ վարքի ազդեցությունը սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի սակագնի վրա, որի համատեքստում մշակվել է էլեկտրաէներգիայի սակագնի որոշման նոր մեթոդաբանություն,
- կանխատեսվել է էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման հեռանկարները:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Առաջադրվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի սակագնի որոշման մեթոդաբանական նոր մոտեցումներ՝ պայմանավորված արդյունավետ սակագնային մարժայի ձևավորմամբ. մասնավորապես, գնահատվել է էլեկտրաէներգիայի սակագնի և սպառման ծավալների վրա մարժայի ազդեցությունը, իսկ մարժայի վրա՝ ծախսային առանձին հոդվածների ազդեցությունը,
- գնահատվել են ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի գնման սակագների փոխազդեցությունները, և բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման և ընդհանուր սպառման զգայունությունները՝ գնման միջին սակագնի նկատմամբ,
- գնահատվել է էլեկտրաէներգիա արտադրող կայանների վարքագծի ազդեցությունը սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի սակագնի վրա: Հաշվարկվել է էլեկտրաէներգիայի վերջնական սակագնի վրա մարժայի ազդեցությունը և սակագնի հաշվարկային մեծությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև՝ եզրակացությունները և առաջարկները:

Ատենախոսության առաջին՝ **«Էլեկտրաէներգետիկական շուկաների բնութագրման տեսամեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացված են էլեկտրաէներգետիկական շուկաների բնութագրման և գնահատման հիմնական տեսական խնդիրները: Դիտարկվել է նաև էլեկտրաէներգետիկական համակարգի

կարգավորման մեթոդաբանության կատարելագործման ուղղությունները: Տրվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ շուկան կարգավորող օրենսդրության վերլուծությունն, որի արդյունքում ներկայացվել է հեռանկարային բարելավման այն ուղղությունները, որոնք, առավելապես կհանգեցնեն ՀՀ էներգետիկ շուկայի արդյունավետ զարգացմանը:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման արդի հիմնախնդիրներն և սակագնային քաղաքականությունը»** գլխում տրվել է էլեկտրաէներգետիկական համակարգը բնութագրող հիմնական տնտեսական և վիճակագրական ցուցանիշների վերլուծությունն, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ու բաշխման գործող համակարգերի գործունեության արդյունավետության գնահատումը, և քննարկվել գործող սակագների հիմնավորվածությունը: Այդ համատեքստում ներկայացվել է էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը, գազամատակարարման համակարգի կորուստների հաշվարկը, մայրուղային գազատարերում կորուստները, ՀՀ և ՌԴ կառավարությունների համաձայնագրերը, գազի ջերմատվության վերահաշվարկը, ակտիվների շահութաբերության նորման, «Հայաստան-Վրաստան» օդային գծի կառավարումը, բացահայտվել էլեկտրաէներգիայի կորուստների կրճատման հնարավորությունները, և տրվել առաջարկություններ՝ համակարգի առկա հիմնախնդիրների արդյունավետ լուծման և կայուն զարգացման ուղղությամբ:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի սակագնային արդյունավետ մարժայի ձևավորման ուղիներն և զարգացման հեռանկարները»** գլխում վերլուծվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի վերջնական սպառման սակագնի ձևավորման վրա ազդող բաղադրիչները: Պարզվել է, թե «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի վրա ինչպիսի ազդեցություն ունեն արտադրող կայաններից գնման միջին սակագինը, շահագործման ծախսերը, սակագնում ներառված ընդհանուր ծախսերը: Մշակվել է էկոնոմետրիկ մոդել շահագործման ծախսերի, սակագնում ներառված ընդհանուր ծախսերի և սակագնային մարժայի միջև

փոխազդեցությունների գնահատման համար: Գնահատվել է նաև սակագնային մարժայի ազդեցությունը էլեկտրաէներգիայի սպառման ծավալների վրա: Հետազոտվել են համապատասխան ցուցանիշների կորելացիոն կախվածությունները, գնահատվել է ռեգրեսիոն հավասարում՝ սակագնային մարժայի վրա դեբիտորական պարտքի և կորուստների փոխազդեցությունները պարզաբանելու համար: Հետազոտվել է արտադրող ջերմաէլեկտրակայանների՝ Երևան և Հրազդան ՋԷԿ-երի օպտիմալ վարքի ազդեցությունը սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի գնման միջին սակագնի վրա: Գնահատվել են Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երի կայանների վառելիքային ծախսերի ֆունկցիաները՝ կախված համապատասխան արտադրության ծավալներից, հաշվարկվել են դրանց միջին ամսական օպտիմալ ծավալները վարիացիոն անհավասարումների միջոցով: Գնահատվել են արտադրող կայանների կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի միջին սակագնի վրա համապատասխան կայանների կողմից արտադրության համար անհրաժեշտ ընդհանուր ծախսերի ազդեցությունները: Որոշվել է սակագնային մարժայի վրա գնման միջին սակագնի ազդեցությունը: Վերջին քայլով հաշվարկվել է էլեկտրաէներգիայի վերջնական սակագնի վրա սակագնային մարժայի ազդեցությունը և տրվել էլեկտրաէներգիայի սակագնի վաճառքի հաշվարկային մեծությունը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

- Ատենախոսության «Տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը» բաժնում հետազոտության տեսական և մեթոդական հիմքերը շատ ընդհանրական են ձևակերպված, նշված չեն, թե որ տեսություններն ու որ մասնագետների աշխատանքներն են հիմք հանդիսացել հետազոտության համար:
- Ըստ գիտական նորույթ արտահայտող գիտական արդյունքներից առաջինի՝ առաջադրվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի

սակագնի որոշման մեթոդաբանության նոր մոտեցումներ: 3.1 ենթագլխում իրականացվել է սակագնի համակողմիանի վերլուծություն, ներկայացվել է դրա կառուցվածքը, գնահատվել է սակագնային մարժայի ազդեցությունը սակագնի և սպառման ծավալների վրա, քննարկվել է կորելացիոն կախվածությունը, սակայն սակագնի որոշման մեթոդաբանության նոր մոտեցումներ հստակ ձևակերպված չեն: Ավելին, գլուխ 3.2-ում ներկայացված է էլեկտրաէներգետիկայի ոլորտում մատակարարման շղթայում արտադրող հանգույցների շահույթի մաքսիմալացման մոդելը՝ իր քայլերով ու հաշվարկներով: Սակայն էջ 117-ում նշված է, որ առաջարկվում է սակագնի հաշվարկման նոր մեթոդ, որի միջոցով կարող ենք գնահատել արտադրող կայանների օպտիմալ վարքի հնարավոր ազդեցությունը սակագնային մարժայի վրա: Բայց նոր մեթոդը ներկայացված չէ:

- Գլուխ 1-ի 1.1 ենթագլուխը վերնագրված է «Էլեկտրաէներգետիկական շուկաների բնութագրման և գնահատման տեսական խնդիրները», ինչն ենթադրում է էլեկտրաէներգետիկական շուկաների վերաբերյալ տեսաբանների, հետազոտողների աշխատանքների քննարկում, վերլուծություն և գնահատում, սակայն ներկայացված է ՀՀ էներգետիկ համակարգի օրենսդրական դաշտը, մասնավորապես ՀՀ էներգետիկայի մասին օրենքի դրույթները: Իսկ 2.1 ենթագլուխը վերնագրված է «ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ներկա վիճակի վերլուծություն, բայց ներկայացված է ՀՀ էներգետիկ համակարգի վերլուծություն:
- Կարգավորողի գործունության հիմնական սկզբունքները ներկայացվել են ըստ խորհրդատվական ծառայությունների մատուցման հաշվետվության: Սակայն, նշված չէ, թե ինչ խորհրդատվական կազմակերպություն է, ինչու են այդ կազմակերպության հաշվետվության վրա հիմնվում, առավել ևս 5 տարվա վաղեմության (էջ 25, 31):
- Էջ 36-ում ներկայացված է 1999-2020թթ. վերջնական սպառողին առաջարկվող սակագների վերաբերյալ աղյուսակ և հղում է տրված ՀԷՑ-ի 2009-2017թթ.

հաշվետվության վրա: Հետևաբար, հասկանալի չէ, թե որտեղից են աղյուսակում բերված 2018, 2019, 2020թթ. տվյալները:

- Էլեկտրաէներգետիկական համակարգի արտաքին և ներքին խթանման, էլեկտրաէներգիայի արտաքին առևտրի գործառույթ իրականացնելու համար (էջ 54) առաջարկվում է ստեղծել առանձին մարմին: Նախ, ներկայացված չէ այդ մարմնի ստեղծման մեխանիզմները, երկրորդ, հիմնավորված չէ մեկ գործառույթ իրականացնելու համար առանձին մարմնի ստեղծման անհրաժեշտությունը, երբ ՀՀ-ում կան մի շարք էլեկտրաէներգետիկ համակարգի գործունեությամբ զբաղվող մարմիններ:
- Աշխատանքում առաջարկվում է, որ էլեկտրաէներգետիկական ցանցային կորուստների 50%-ը փոխհատուցվեն մատակարարների շահույթի հաշվին, ինչը պահանջում է էլեկտրաէներգետիկ օրենսդրության փոփոխություն, որը կարող է իրականացվել ՀՀ ԱԺ-ի կողմից: Կարծում ենք, նման առաջարկը իրատեսական չէ, հատկապես դրա իրականացման մեխանիզմների բացակայության պատճառով:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, հարկ է եզրահանգել, որ ատենախոսությունն իրենից ներկայացնում է ամբողջական հետազոտական աշխատանք, վերը նշված դիտողությունները չեն նսեմացնում ներկայացված աշխատանքի արժեքը և կարող են հաշվի առնվել հեղինակի կողմից հետագա ուսումնասիրությունների ժամանակ: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի վեց գիտական հրապարակումներում:

Թագուհի Բաբսեղյանի «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Ն.Լ.Կիրակոսյան

Ն.Լ. Կիրակոսյանի ստորագրությունը հաստատում եմ

Եվրոպական համալսարանի գիտ քարտուղար՝
տնտ□թ□, դոցենտ Հ. Ռ. Երիցյան

07.12.2020թ.